



Co-funded by the  
Tempus Programme  
of the European Union



**Ոլորտային որակավորումների շրջանակի  
կիրառման ձեռնարկ**

**Manual for Sectorial Qualifications Framework  
(SQF) operationalization**



**ԱՐԱՐԱՏ**

**«Համալսարան-գործատու»  
հայկական համակարգող գործակալություն**

[www.ararattempus.org](http://www.ararattempus.org)

With the support of the Tempus Programme of the European Union

«Համալսարան-գործատու» հայկական համակարգող գործակալություն



**Ոլորտային որակավորումների շրջանակի  
կիրառման ձեռնարկ**

**Manual for Sectorial Qualifications Framework (SQF)  
operationalization**



Co-funded by the  
Tempus Programme  
of the European Union

This project has been funded with support from the European Commission.  
This publication reflects the views only of the author,  
and the Commission cannot be held responsible  
for any use which may be made of the information contained therein.



SYNOPSIS



ANSA



UNIVERSITÄT  
KOBLENZ-LANDAU

W U S T R I A  
right for education



Universitat d'Alacant  
Universidad de Alicante



ISMA  
INFORMÁCIÓS SISTÉMS MENEZEMENTA ALACSTIKOLA



UMCS  
UNIWERSYTET MIAKOWSKI W CZESZCZYNIE



cesie  
THE WORLD OF EDUCATION



Co-funded by the  
Tempus Programme  
of the European Union

## **Բովանդակություն**

Որակավորումների ոլորտային շրջանակի մշակման մեթոդաբանություն .....	4
Methodology on Sectorial Qualifications Framework development .....	39
Ոլորտային որակավորումների շրջանակի կիրառման ուղեցույց.....	71
Ծրագրային համակարգերի ճարտարագիտություն ոլորտի որակավորումների ազգային շրջանակ .....	75

## **Որակավորումների ոլորտային շրջանակի մշակման մեթոդաբանություն**

Որակավորումների ոլորտային շրջանակի (ՈՈԱՇ) դերն ու նշանակությունը ավելի լավ պատկերացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն կրթական և տնտեսական համատեքստը, որում ներկայումս գտնվում է Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ): Այդ իմաստով կարևոր է դիտարկել Խորհրդային միության ժամանակաշրջանի առանձնահատկությունները և դրա ազդեցությունը ներկայիս ՀՀ կրթական համակարգի վրա: Միևնույն ժամանակ հարկ է դիտարկել վերջին տարիներին կատարվող փոփոխությունները, ինչպես կրթական դաշտում այնպես էլ տնտեսության մեջ:

### **Աշխատուժի պատրաստման Խորհրդային Հայաստանի մոտեցում**

Ներկայումս ՀՀ-ում իրականացվող կրթական ծրագրերը մեծապես ձևավորված են դեռևս Խորհրդային շրջանում գործող կրթական ավանդույթների հիմքի վրա: Հետևաբար այդ կրթական ծրագրերը ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ է իրականացել փոքրիկ էքսկուրս և դիտարկել Խորհրդային համակարգի որոշ առանձնահատկություններ:

17-րդ դարի արդյունաբերական հեղափոխությունից սկսած կրթությունը դարձավ զանգվածային, իսկ կրթական համակարգը սկսեց սպասարկել տնտեսությանը՝ դադարելով լինել թափափորական, իշխանական կամ հարուստ խավի մենաշնորհ: Սպասարկել տնտեսությանը՝ նշանակում է արձագանքել դրա աշխատաշուկայի պահանջներին և պատրաստել այնպիսի մասնագետներ, ովքեր առավելագույնս կհամապատասխանեն դրան: Արդյունքում աշխատաշուկան սկսեց ազդել կրթության բովանդակության, ձևի

և նպատակների վրա: Այսպիսով առաջացավ կրթություն - աշխատաշուկա տանդեմը, որը մինչ օրս արդիական է:

Խորհրդային պետությունում գործում էր աշխատուժի կառավարման պլանային կենտրոնական համակարգ: Այս համակարգը ուներ հետևյալ հիմնական առանձնահատկությունները՝

1. *Ամբողջությամբ պետության կողմից ֆինանսավորվող և հստակ գործառույթներով օժտված պաշտոններ:*

Բոլոր պաշտոնները և դրանց հիերարխիան հստակ սահմանված էր և պահպանվում էր պետության կողմից: Տնտեսության կառավարման և զարգացման հնգամյա սկզբունքը թույլ էր տալիս մի քանի տարի առաջ սահմանել տվյալ պաշտոնի համար անհրաժեշտ կրթական պատվերը: Արդյունքում առաջացել էր այդ համակարգի հաջորդ բաղադրիչը՝

2. *Ստանդարտացված կրթական ծրագրեր:*

Քանի որ պաշտոնները ունեին հստակ սահմանված նկարագրեր և դրանք չէին տարբերվում նվազագույնը մեկ երկրի մակարդակում՝ հետևաբար ստեղծվում էին ստանդարտ կրթական ծրագրեր: Նման ստանդարտացումը բերում էր նրան, որ երկրում գործող նույնանուն կրթական ծրագրերը նույնական էին և արդյունքում պատրաստում էին նույնատիպ մասնագետների: Դրա հիմնական անկյունաքարն էին հանդիսանում առարկայական ծրագրերը, որոնք իրենց հերթին հիմնականում նույնական էին:

Արդյունքում կրթական ծրագրերը ըստ էության խիստ ընդհանուր էին և ուղղված էին լայն պրոֆիլով աշխատուժ պատրաստելու խնդրի լուծմանը: Պրակտիկ հմտությունները մասնագետները ձեռք էին բերում ավարտական աշխատանք իրականացնելիս կամ արդեն աշխատավայրում՝ աշխատանքի առաջին տարում: Այստեղից էլ ծագել է երրորդ բաղադրիչը՝

### 3. Կրթական ծրագրերի լայն պրոֆիլ:

Այսպիսով կար մի իրավիճակ, երբ աշխատուժի պատրաստման համար սահմանված էին հստակ չափանիշներ՝ որոնք ոչ միայն սահմանված էին այլ նաև երաշխավորված կերպով պահպանվում էին պետության կողմից: Այն իր կրթական պատվերը՝ աշխատուժի հմտությունների առումով, չէր փոխում: Դա արդյունք էր տնտեսական կառավարման յուրահատուկ համակարգի՝ 5 ամյա պլանի:

Ներկայումս ՀՀ-ում գործող կրթական ծրագրերը անհրաժեշտ է դիտարկել աշխատաշուկայի կառավարման կենտրոնական համակարգի վերացման և նոր՝ ավելի ճկուն և հարափոփոխ համակարգի առաջացման տեսանկյունից: Այսպիսով՝ հարկ է փաստել, որ ՀՀ-ում էականորեն թուլացել է պետության, որպես աշխատուժի պահանջը կարգավորողի դերը: Շուկայական տնտեսության և գլոբալ շուկայի առաջացման հետևանքով պետությունը այլևս չի կարող և չի ներկայացնում պաշտոնների նկարագրեր ամբողջ աշխատաշուկայի համար: Ավելին, պաշտոնները ներկայումս այնքան բազմազան են, որ դրանք ամբողջությամբ նկարագրելու հնարավորությունը խիստ կասկած է առաջացնում:

Այս փոփոխությունը հանգեցրել է կրթության և աշխատաշուկայի միջև խզման, առնվազն անցումային բավականին երկար ժամանակահատվածում: Այդ խզումը պայմանավորված է հետևյալով. կրթությունը չի դադարում մասնագետներ պատրաստել «խորհրդային տնտեսության և աշխատաշուկայի համար»: Դա տեղի է ունենում, քանի որ դեռևս պահպանվում են տարիներ շարունակ ձևավորված առարկայական ծրագրերի ցանկերը մեծ և մեկուսացված երկրի մոդելով: Դրանք այն ծրագրերն են, որոնք պատրաստել են մասնագետներ շատ հստակ սահմանված պաշտոնների համար: Սակայն ներկայումս, պայմանավորված շուկայական հարաբերությունների ձևավորմամբ այդ պահանջները փոփոխվում են: Արդյունքում առաջանում է խզում տանդեմի երկու մասնիկների միջև:

Այսպիսով խորհրդային կրթական համակարգը՝ կախված դրանում գործող տնտեսական համակարգի առանձնահատկությունից, ներկայացնում էր աշխատուժի պատրաստման հստակ և համընդհանուր պատվեր: Գլոբալացումը և կրթության մասսայականացումը շուկայական տնտեսության պայմաններում համընդհանուր պահանջները՝ ստանդարտացված կրթական ծրագրի տեսքով կիրառելի չեն հետևյալ հիմնական պատճառներով՝

- աշխատուժին ներկայացվող պահանջների դիվերսիֆիկացիա,
- որակավորումների միջև համեմատելիության մակարդակի նվազում,
- կրթության և աշխատանքային փորձի ճանաչման կարիք՝ երկրի սահմաններից դուրս:

Անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին:

Պլանային տնտեսությունից շուկայականի անցման հետ զուգահեռ առաջացան մի շարք «նոր» կամ «գրավիչ» մասնագիտություններ և փոխվեցին նախկին անվանումներով մասնագիտությունների նկատմամբ պահանջները: Դրա արդյունքը եղավ այն, որ պահանջները սկսեցին դիվերսիֆիկացվել և առաջացան հարյուրավոր մասնագիտական խմբեր:

Չնայած ներկայումս գործող շուկայական տնտեսության՝ աշխատուժին ներկայացվող կրթական պահանջների խնդիրը շարունակում է արդիական մնալ: Տարբերությունը կայանում է նրանում, որ նախկին ստանդարտացված մոտեցումը ներկայումս փոխարինվում է ավելի ճկուն մոտեցմամբ առավել ինքնավարություն տալով ուսանողին իր ընտրության մեջ, կրթություն տրամադրողին առավել ինքնավար լինել իր առաջարկներում (շուկայական նպատակներ): Արդյունքում փոխվել է այդ պահանջի նպատակը՝ վերևից հստակ սահմանված կրթական ծրագրից դառնալով վերևից ուղղորդող/



կողմնորոշիչ նկարագրություն: Այս փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ շուկայում առաջացել են պաշտոնների ներկայացվող ոչ միայն բազմաթիվ պահանջներ, այլև հաճախ նույն պաշտոնին ներկայացվող պահանջները տարբեր կազմակերպություններում տարբեր են:

Հենց այս խնդիրը լուծելու նպատակով որակավորումները նկարագրող փաստաթղթերը ստացան ավելի կողմնորոշիչ և խորհրդատվական բնույթ: Այս մոտեցումը թույլ տվեց բավարար ազատություն տալ կրթական ծառայություններ մատուցող հաստատություններին: Միննույն ժամանակ որակավորումների կողմնորոշիչ բնույթը լուծում է այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ուսանողների շարժունությունն, տարբեր երկրներում տրված որակավորումների համեմատելիությունը արդեն ոչ թե բաղադրիչների անվանումների մակարդակով այլ ուսանողի հետապնդած նպատակների մակարդակով:

Նշված խնդիրները ուղեկցվում են որակավորումների նկարագրությունների մեջ հասկացությունների և դրանց կիրառման տարբերությունների հետ առաջացող խնդիրներով: Այս հարցում դժվարությունը պայմանավորված է նկարագրվող ոլորտների բազմազանությամբ և դրանցում կիրառվող հասկացությունների տարբերությամբ: Այս հաղորդակցման խնդիրը նույնպես լուծվում է որակավորումների շրջանակային նկարագրությամբ:

## **Որակավորումների գաղափարը որպես աշխատուժի ձևավորման կողմնորոշիչ**

Ներկայումս գործատուն ցանկանում է ունենալ ոչ թե գիտելիքներ ունեցող կադր, այլ ցանկանում է տեսնել անհրաժեշտ կամ աշխատատեղում գործատուին ճանաչելիվարք: Գործատուի այս պահանջը բավարարելու համար կրթությունը պետք է պատրաստի ոչ թե պաշտոնի կրողին, այլ պահանջված վարքի կրողին: Հետևա-

բար կրթություն - աշխատաշուկա երկխոսությունը պետք է իրականանա հենց վարքի նկարագրության լեզվով:

Բիզնեսը սպասում է, որ կրթական համակարգը կտրամադրի իրեն անհրաժեշտ վարքի կրողին և ինքը այլևս կարիք չի ունենա նրան սովորեցնել զրոյական կետից աշխատանքային իրավիճակին՝ կունենա պատրաստի աշխատուժ: Բիզնեսի այս պահանջները, ինչպես նշվեց վերևում խիստ տարբեր են կախված ոլորտից և մասնագիտությունից:

Նման տարբերությունները հանգեցրել են նրան, որ կրթական ծառայություններ մատուցող հաստատությունները սկսել են մտածել առաջարկի և պահանջարկի կատեգորիաներով՝ դրանով ավելի մոտենալով բիզնեսի տրամաբանությանը:

Այս տանդեմի մեջ հարկ է հիշատակել պետությանը, որը պատասխանատվություն կրելով տնտեսության զարգացման համար, չէր կարող մասնակից չլինել որակավորումների մասին երկխոսությանը՝ ինչքան ավելի համահունչ լինեն երկխոսողները այնքան ավելի արդյունավետ կլինի տնտեսությունը: Պետությունը մասնակցում է այս գործընթացին կողմնորոշիչ դերով: Մասնավորապես, այն ներկայացնում է կոմպետենցիաների այն շարքը, որը համարում է խիստ կարևոր և որը ըստ էության հիմնված է տնտեսության մեջ եղած պահանջարկի վրա, բայց ապահովելով տեղական կառույցների զարգացումը տեղ թողնելով արտաքին գործատուի մուտքին տեղական շուկա:

Գործատուի և կրթության միջև երկխոսությունը ունի երկու հիմնական տրամաբանություն: Մի կողմից կրթությունը պետք է ապահովի տեղական շուկայի պահանջներին համապատասխան կադրեր, իսկ մյուս կողմից պետք է պահպանի դրանց համապատասխանությունը համաշխարհային շուկայի պահանջներին:

Համաշխարհային շուկայի պահանջները, որպես կանոն խիստ

ընդհանրական են ներկայացվում և ավելի կայուն են լինելով ընդհանրական: Նույնը չի կարելի ասել տեղական շուկայի մասին, որը պակաս դիվերսիֆիկացված է և զգայուն փոփոխությունների նկատմամբ:

## **Որակավորումների Ազգային Շրջանակ**

Որակավորումների ազգային շրջանակը ՀՀ-ն մշակել և ընդունել է 2011 թվականին և դրանով իսկ հիմք է դրել վերջնադյունքահեն կրթության իրականացմանը: ՈԱՇ-ում հիմնական տարրերը վերջնադյունքներն են, որոնք նկարագրում են յուրաքանչյուր կրթական մակարդակի որակավորման ընդհանրական նկարագիրը և թե որքանով է տրված կրթությունն առաջընթաց ապահովում համակարգում: Այն նկարագրում է գիտելիքի, հմտությունների և ընդհանրական կարողությունների առաջընթացը յուրաքանչյուր մակարդակում: ՈԱՇ-ը հանդիսանում է պահանջվող կարողությունների առաջընթացի սանդղակը նկարագրող համակարգ, որի գլխավոր գործառույթներից մեկն էլ աշխատաշուկայի պահանջները ընդհանրական բնութագրիչների տեսքով փոխանցելն է կրթական ծառայություններ մատուցողներին:

Շուկայի պահանջը արտացոլելու հետ զուգահեռ ՈԱՇ-ի հաջորդ կարևոր գործառույթը Եվրոպական որակավորումների շրջանակի (ԵՈՇ) հիմնական պահանջների փոխանցումն է: Դա կատարվում է ոչ թե ուղղակի թարգմանության, այլ ԵՈՇ-ում առկա որակավորումների մակարդակի նկարագրիչների միջոցով: Այդ նկարագրիչներին կանդիդատանք ստորև բերված տեքստում:

Փոխանցելով աշխատաշուկայի ընդհանրական պահանջները ՈԱՇ-ը չի լուծում առանձին ոլորտներին հատուկ պահանջները: Այդ նպատակով մշակվում են ոլորտային պահանջներ ներառող շրջանակներ՝ Որակավորումների ոլորտային ազգային շրջանակներ

(ՈՈԱՇ): Վերջինը պարունակում է ինչպես ընդհանուր ընդհանրական կոմպետենցիաների, այնպես էլ ոլորտին առանձնահատուկ կոմպետենցիաների նկարագրություններ:

## **ՈՈԱՇ-ի նպատակը և խնդիրները**

Վերջին 20 տարիների ընթացքում բարձրագույն կրթության ոլորտը ենթարկվում է տարբեր տեսակի ներգործությունների՝ կապված դրա բարելավման, արդյունավետության բարձրացման և նոր պայմաններին համապատասխանեցնելու համար: Այդ ներգործություններից թերևս առավել կարևորը մեր երկրի համար բոլոնյան հռչակագրի ստորագրումն էր, որը իրենից ենթադրում է եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ստեղծում, կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի ստեղծում և անցում դասախոսակենտրոնից ուսանողակենտրոն՝ վերջնարդյունքահեն ուսուցման:

Բոլոնյան հռչակագրի 10 գործողություններից առաջինը ուղղված է եվրոպական կրթական տարածքում որակավորումների փոխճանաչման միասնական համակարգի ստեղծմանը: Այդ համակարգի ստեղծման համար կիրառվող կարևոր գործիքներից մեկը որակավորումների շրջանակի նկարագրությունն է: Բոլոնյան հռչակագրին միացած մի շարք երկրներ մշակել են իրենց Որակավորումների ազգային շրջանակները: Բացի ազգային մակարդակում գործող շրջանակից, որոշ երկրներում կիրառվում են Ոլորտային որակավորումների ազգային շրջանակներ (ՈՈԱՇ): ՈՈԱՇ-ը, որոշակի ոլորտին վերաբերող որակավորումների նկարագրություն է, որտեղ կենտրոնական դերը պատկանում է ոլորտի գործատուներին:

Ի սկզբանե նախատեսված լինելով լուծելու անդրազգային և տեղական մակարդակի որակավորումների փոխճանաչման խնդիրներ՝ Որակավորումների շրջանակները և հատկապես ՈՈԱՇ-ը

կարող է կիրառվել երկու հիմնական նպատակներով:

Դրանցից առաջինը շահակիցների միջև հաղորդակցումն է: Հաղորդակցումը ապահովելու համար ՈՌԱՇ-ը լուծում է հետևյալ խնդիրները՝

- ճանաչում
  - որակավորումներ
  - հավաստագրեր
- հմտությունների գնահատում
- կարիերայի կողմնորոշում

Ինչպես արդեն նշվեց **ճանաչման** խնդիրը ի սկզբանե եղել է բոլոնյան գործընթացի հիմնական գործողություններից առաջինը: Այն իրենից ենթադրում է, որ շնորհվող որակավորումները ճանաչելի են տարբեր երկրների կրթական հաստատությունների և գործատուների կողմից: Անձը կրթություն ստանալով մեկ երկրում կարող է շարունակել իր հետագա կրթությունը կամ աշխատանք գտնել այլ երկրում, քանի որ իր երկրում գործող որակավորումների համակարգը համահունչ է մյուս երկրի համակարգին: Այսպիսով ՈՌԱՇ-ը թույլ է տալիս խթանել շարժունությունը և ճանաչելիությունը ինչպես աշխատաշուկայում այնպես էլ կրթության մեջ: Ավելին, այն բխելով ՈԱՇ-ից թույլ է տալիս ապահովել առանձին ոլորտի ուսանողների և մասնագետների շարժունությունը:

Ինչպես աշխատանքային, այնպես էլ կրթական շարժունության իրականացման անբաժան մասը նախկին փորձի **գնահատման** գործընթացն է: Այն թույլ է տալիս գործատուին և համալսարանին համոզվել կրթության կամ աշխատանքի համար անձի համապատասխանության մեջ: ՈՌԱՇ-ները թույլ են տալիս այդ գնահատումը իրականացնել բոլոր շահակիցների համար հասկանալի և միասնական լեզվով:

Կրթական ծրագրերի մշակման մեջ ՈՌԱՇ-ը ունի **կողմնորոշիչ** նշանակություն և թույլ է տալիս կրթական ծրագիրը կառուցել

հաշվի առնելով այն կոմպետենցիաները, որոնք նկարագրված են շրջանակներում և ավելի կողմնորոշված պլանավորել ուսանողի ծանրաբեռնվածությունը կոմպետենցիայի ձեռքբերման համար:

ՈՈԱՇ-ը թույլ է տալիս ուսանողին կամ մասնագետին կողմնորոշվել հետագա մասնագիտական զարգացման մեջ, սովորելու ընթացքում ավելի լավ ճանաչել իր ձեռքբերումները և ընտրել իր համար նախընտրելի ուսումնական և աշխատանքային ուղի՝ սահմանելով զարգացման մոտակա գոտին:

Սրանք այն հիմնական խնդիրներն են, որոնց լուծմանը նպաստելով որակավորումների և մասնավորապես ոլորտային որակավորումների շրջանակները ապահովում են հաղորդակցման նպատակի իրականացումը: Ըստ էության բերելով բոլոր շահագրգիռ կողմերին մեկ ընդհանուր լեզվական դաշտի՝ ՈՈԱՇ-ը նպաստում է դրանց միջև արդյունավետ երկխոսության ծավալմանը:

ՈՈԱՇ-ի հաջորդ նպատակը վերաբերում է կրթական համակարգի զարգացման կողմնորոշմանը, որին հասնելու համար այն նպաստում է հետևյալ խնդիրների լուծմանը՝

- Կրթական շուկայի կողմնորոշում
- Կրթական ծրագրերի մշակում
- Որակի ապահովում

Կրթական համակարգի զարգացման կողմնորոշման նպատակը իրականացվում է ՈՈԱՇ-ի աջակցող փաստաթղթերի միջոցով: Աջակցող փաստաթղթերը՝ հիմնված են շրջանակի նկարագրության վրա, ունեն խորհրդատվական բնույթ և նպաստում են վերոնշյալ խնդիրների լուծմանը: Այդ գործընթացում ՈՈԱՇ-ի դերը խիստ կարևոր է, քանի որ այն ծառայում է, որպես կրթական համակարգի զարգացման քաղաքականության գործունեության թիրախ՝ ապահովելով կոմպետենցիաների այն համախումբը, որոնց զարգացմանն ու ձևավորմանը պետք է ուղղված լինեն շուկայի զարգացման և կրթական քաղաքականությունները:

ՈՈԱՇ-ի օգնությամբ մշակվող քաղաքականությունները հնարավորություն են ստանում ավելի հստակ սահմանել այն շեշտերը, որոնք անհրաժեշտ են շուկայի կամ կրթական ոլորտի զարգացման համար:

Այսպիսով, ՈՈԱՇ-ը ունի երկու կարևոր նպատակ. առաջինը վերաբերում է հաղորդակցական և միասնական լեզվին, երկրորդը՝ շուկայի և կրթական քաղաքականության կողմնորոշմանը:

## **Մոդելի հիմնավորում**

ՈՈԱՇ-ի մշակման համար առաջարկվող մոդելը բաղկացած է հետևյալ հիմնական բաղադրիչներից՝

- Ոլորտին հատուկ ապրանք
- Ապրանքի կենսափուլ
- Մասնագիտական մտածողություն
- Գիտելիքի մարմին

Ոլորտին հատուկ ապրանքի նկարագրությունը անհրաժեշտ է, որպեսզի շրջանակը ամբողջական պատկերացում տա մասնագետի գործունեության նպատակի մասին: Այն թույլ է տալիս վերացական նկարագրությունները դիտարկել շատ հստակ, բոլորի կողմից հասկանալի, հաճախ նաև շոշափելի առարկաների համատեքստում: Ստացվում է, որ ապրանքի նկարագրությունը շրջանակը օգագործողին թույլ է տալիս ավելի հստակ պատկերացում ունենալ ոլորտում գործունեություն ծավալող մասնագետի առարկայական նպատակների մասին:

Ոլորտի ապրանքի համատեքստով մոտեցումը արդյունավետ է նաև գործատուների հետ հանդիպումների ընթացքում: Այդ արդյունավետությունը կայանում է հետևյալում: ԵՈՇ-ից ավելի ցածր կանգնած շրջանակներ ժառանգվող հիմնական հատկություններն են ինքնուրույնությունը և համատեքստի բարդությունը: Հետևաբար գործատուների հետ երկխոսության ժամանակ հարկ է պարզել

այդ հատկությունների որոշ առանձնահատկություններ: Սակայն գործատուներին դժվար է մտածել այդ հասկացությունների սահմաններում: Փոխարենը նրանք շատ լավ պատկերացնում են իրենց կողմից արտադրվող ապրանքը: Հենց ապրանքի միջոցով է հնարավոր է լինում դուրս բերել ինքնուրույնության և բարդության ցուցանիշները:

ՈՈԱՇ-ը ըստ էության կապող օղակ է աշխատաշուկայի և կրթական համակարգի միջև: Այդ կամուրջի ձևավորման նպատակով անհրաժեշտ է աշխատանքային միջավայրի հատկանիշները տեղափոխել դեպի կրթական միջավայր: Այդ նպատակով կիրառվում է ապրանքի կենսափուլը: Այն թույլ է տալիս ապահովել ոչ միայն աշխատանքային միջավայրի տեղափոխություն այլ նաև հնարավորություն է տալիս գործատուի խոսքը և մոտեցումը բերել կրթություն: Ընդ որում անել դա ընդգրկելով տեխնոլոգիական ողջ ցիկլը: Ներկայիս պայմաններում, երբ պետությունը գնալով ավելի պասիվ դեր է վերցնում, կրթական պատվերի իմաստով նման մոդելը խիստ արդյունավետ է դառնում: Միաժամանակ կրթական հաստատությունը իր արածի մասին կարծիք հարցնելուց կկարողանա պրակտիկ կողմը ցույց տալ արդեն գործատուի կոնտեքստում և արձագանքը առավել նպատակային կարող է լինել:

Մյուս կողմից բացարձակ աշխատաշուկայի տեմիններով և լեզվով խոսելու դեպքում կա վտանգ, որ կրթությունը ամբողջությամբ չի ընկալի շուկայի պատվերը: Ավելին, ՈՈԱՇ-ը ի սկզբանե մտածված է եղել հենց այդ հաղորդակցական արգելքը հաղթահարելու համար: Հետևաբար անհրաժեշտ է, որպեսզի շրջանակը ներառի կրթական դաշտի համար հասկանալի բաղադրիչ:

Հենց այս խնդիրը լուծելու նպատակով շրջանակում ներառվել է ոլորտին հատուկ «գիտելիքի մարմին»: Կրթության խնդիրը կդառնա ուղղորդել արդեն դասական դարձած գիտելիքը, բովանդակությունը՝ դեպի աշխատաշուկայի պահանջներ: Այդ իմաստով հարկ է ուշադրություն դարձնել գնահատման և դասավանդման մեթոդների



վրա, որոնք առավելագույնս պետք է մոտեցնել աշխատանքային պայմաններին: Սա նշանակում է, որ կախված կրթական ծրագրի պահանջներից և առանձնահատկություններից անհրաժեշտ է գնահատումը և հանձնարարությունները պլանավորել ապրանքի և դրա շրջափոփի համատեքստում: Մոտեցնել կրթական ծրագիրը դրանց առանձնահատկություններին:

Մասնագիտական մտածողությունը այս մոդելում հանդես է գալիս, որպես մասնագիտական խնդիրներ լուծելու գրավական: Այն ոլորտի մասնագետի ներքին՝ մտավոր վարքն է: Դրանով են տարբեր ոլորտների մասնագետները տարբերվում խնդիրներ լուծելու մոտեցումներում: Նկարագրված մոդելը դյուրացնում է նաև ոլորտային հետազոտությունների գործընթացը: Այն թույլ է տալիս ոլորտային հետազոտություններ իրականացնելիս հստակ բաժանում կատարել գաղափարական կոնստրուկտների մեջ: Օրինակ հարցաշարեր մշակելիս հարցեր տալ միայն ապրանքի կենսափուլերից մեկի մասին: Այն ավելի է հեշտացնում մեթոդաբանության և գործիքների մշակումը և ապահովում է հավաստի արդյունքներով:

Այսպիսով, ներկայացված մոդելը հանդես է գալիս, որպես ոլորտի բոլոր էական առանյնահատկությունները ընդգրկող, ամբողջական մոդել:

### **ՈՈԱՇ-ի մշակման մեթոդաբանության հիմնական սկզբունքները**

Ստորև բերված նկարագրության մեջ մանրամասն անդրադարձ է կատարվել նախորդ բաժնում նկարագրված մոդելի բաղադրիչներին: Մասնավորապես ներկայացված են ՈՈԱՇ-ի մշակման սկզբունքները, ընդլայնված կերպով բերված է ապրանքի կենսափուլի նկարագրությունը, տրված է մի շարք բանալի բառերի սահմանումներ:

Սկզբունքների մշակման կարիքը առաջացել է երկու հիմնական խնդիրների լուծման համար:

Առաջին խնդիրը ժառանգման խնդիրն է: Ինչպես նշվեց ՈԱՇ-ի նկարագրության մեջ դրանց նպատակներից մեկն է ապահովել շնորհվող որակավորումների համապատասխանությունը ԵՈՇ-ին: Ըստ էության խոսքը գնում է որակավորումների ժառանգման մասին: Առաջարկվող մեթոդաբանության մեջ ներկայացված է ժառանգման սկզբունքը և դրա պահպանման միջոցը:

Երկրորդ խնդիրը՝ ամբողջականության խնդիրն է, որը ներկայացվեց մոդելի հիմնավորման մեջ: Այն առնչվում է շրջանակի համապարփակությանն ու բոլոր շահակիցներին հասկանալի լինելուն: Այս խնդիրը լուծելու նպատակով սահմանվել է ամողջականության սկզբունքը, որի իրականացման միջոցները մասամբ քննարկվել են, սակայն առավել ընդարձակ տեսքով կներկայացվեն ստորև:

ԱՐԱՐԱՏ ծրագրի շրջանակներում մշակված ՈՈԱՇ-ի մեթոդաբանությունը մինչև վերջնական կիրառման մեջ մտնելը պետք է անցնի նախնական գնահատում: Դա պայմանավորված է նրանով, որ այս մեթոդաբանությունը պետք է կիրառվի 3 տարբեր ոլորտների համար ՈՈԱՇ մշակելու նպատակով: ՈՈԱՇ-ների միջև տարբերությունները պայմանավորված են ինչպես շահակիցներով, այնպես էլ առարկայական ոլորտներով: Նախնական գնահատումը թույլ կտա կարգավորել այդ տարբերություններից բխող խնդիրները:

ՈՈԱՇ-ի մշակման համար նախատեսված մեթոդաբանությունը, որը իր մեջ ներառում է գլխավորապես շրջանակի նկարագրությունը և դրա կառուցվածքի բաղադրիչների միջև առկա կապերը անհրաժեշտ է դիտարկել որպես նախնական փաստաթուղթ: Առանձին ոլորտում ՈՈԱՇ մշակելու նպատակով փաստաթղթի կիրառման հնարավորությունները գնահատելու համար անհրաժեշտ է տալ հետևյալ հարցերի պատասխանները՝

- Արդյո՞ք նկարագրված մեթոդաբանությունը հասկանալի և իրականանալի է տվյալ ոլորտի համար;
- Արդյո՞ք ոլորտի առանձնահատկությունները արտացոլվում են

նկարագրված մեթոդաբանությամբ աշխատելու պարագայում;

- Ինչիպիսի փոփոխություններ է անհրաժեշտ իրականացնել մեթոդաբանության մեջ, որպեսզի այն համապատասխանի ձեր ոլորտին:

Այս հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է սահմանել որոշակի կողմնորոշիչ չափանիշներ: Այդ չափանիշների դերում մենք տեսնում ենք այն հիմնական սկզբունքները, որոնք ընկած են մեթոդաբանության հիմքում: Դրանք են՝

- Օպերացիոնալիզացիա
- Ամբողջականություն
- Ժառանգում

**Օպերացիոնալիզացիան** դա *այնպիսի երևույթի չափելի մասնակիցների սահմանումն է, որը առաջին հայացքից չափելի չէ: Սա կատարվում է ամբողջը էական մասերի բաժանելու սկզբունքով: Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ բաժանված մասերը պետք է խոսեն ամբողջի գոյության մասին:* Այն ամբողջականության սկզբունքի անբաժանելի մասն է, քանի որ թույլ է տալիս սահմանել ամբողջի այն մասերը, որոնք տեսանելի և հասկանալի են շահակիցների համար՝ այսպիսով դյուրացնելով հաղորդակցման գործընթացը և հավաստելով, որ ամբողջի բոլոր էական մասերը քննարկված և հաշվի են առնված: Ըստ էության օպերացիոնալիզացիան հանդես է գալիս, որպես ամբողջականության ապահովման միջոց:

**Ամբողջականության** սկզբունքը ապահովվում է երկու ճանապարհով: Առաջին ճանապարհը, դա ոլորտին հատուկ կոմպետենցիաների դասակարգումն է ապրանքի կենսափուլի սկզբունքով (Product Lifecycle - PLC): Այն իրենից ենթադրում է որոշակի ապրանքի կամ ծառայության ստեղծման գործընթացի բաժանում փուլերի: Այդ փուլերը ունեն հետևյալ ընդհանուր տեսքը՝ **գաղափարի առաջացում, նախագծում, իրականացում և կիրառում:** Ի սկզբանե այն ի հայտ է եկել մեքենաշինության մեջ և

հետագայում լայն տարածում է գտել այլ ոլորտներում: Հայտնի են կրթության մեջ ապրանքի կենսափուլի սկզբունքի կիրառման մի շարք օրինակներ: Ինժեներիայի ոլորտում մշակված է և լայն տարածում ունի CDIO<sup>1</sup> մոտեցումը: Համաեվրոպական էլեկտրոնային կոմպետենցիաների<sup>2</sup> (e\_Competence) նկարագրության մեջ նույնպես կիրառված է որակավորումների դասակարգման այս սկզբունքը: Instructional design-ի ADDIE<sup>3</sup> մոդելը նույնպես կառուցված է ապրանքի կենսափուլի սկզբունքով:

Այսպիսով, այս մոդելի կիրառումը թույլ է տալիս լուծել ամբողջականության և օպերացիոնալիզացիայի խնդիրները:

Ամեն փուլի ներսում անհրաժեշտ կոմպետենցիաները նկարագրելու նպատակով սահմանվել են այն հմտությունները, որոնց առկայությունը անհրաժեշտ է ամբողջականության ապահովման համար: Դրանք ունեն ռուբրիկների տեսք:

Օրինակ՝ մտահղացման փուլը պետք է ներառի՝

- Կարիքների գնահատում և նպատակադրում
- Ապրանքի կամ ծառայության կոնցեպցիա և կառուցվածք
- Նպատակների համապատասխան համակարգի մոդելավորում
- Կառավարման մոդելի մշակում:

Երկրորդ ճանապարհը, ոլորտի հիմնական առարկաների կամ բովանդակության միացումն է ՈՈԱՇ-ին: Այս կարիքը առաջացավ, քանի որ ոլորտային շրջանակները հանդիսանում են դիսցիպլինար նկարագրիչներ և ուղիղ կապված են մասնագիտության նկարագրությունների հետ: Դրանք իրենցից ներկայացնում են այնպիսի

---

<sup>1</sup> Crawley, E.F., Malmqvist, J., Östlund, S., Brodeur, D.R., Edström, K. Rethinking Engineering Education The CDIO Approach, 2014

<sup>2</sup> <http://www.ecompetences.eu/>

<sup>3</sup> Peterson, C. (2003). Bringing ADDIE to Life: Instructional Design at Its Best. Journal of Educational Multimedia and Hypermedia, 12(3), 227-241.

վարքի նկարագրություններ, որոնք թույլ են տալիս ընդհանուր պատկերացում կազմել մասնագետի մասին: Նման նկարագրությունը կողմնորոշում է ուսանողներին, գործատուներին և դասախոսներին իրենց աշխատանքներում:

Որպեսզի ավելի դյուրանա ուսումնական հաստատությունների աշխատանքը անհրաժեշտ է ստեղծել նաև առարկաների բազա, որոնք հիմնական են տվյալ ոլորտի համար: Այդպիսով ակադեմիական դաշտը ավելի վստահ կլինի իր գործողությունների մեջ, քանի որ կունենա մասնագիտական շրջանակների կողմից երաշխավորված բովանդակություն: Ըստ էության առարկաների այդ ցանկը ներկայացված է ներկայումս ՀՀ-ում գործող պետական չափորոշիչներում:

Վերջին սկզբունքը, որը կիրառվել է այս մեթոդաբանության մեջ դա **ժառանգման** սկզբունքն է: Այս սկզբունքի կիրառման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ որակավորումների շրջանակները (Եվրոպական և ազգային) կապված են ուղղահայաց կապով: Ազգային շրջանակը համապատասխանեցվում է եվրոպականին: Այդ համապատասխանեցումը իրականանում է ավելի բարձր դրված շրջանակում առկա հիմնական բաղադրիչների ժառանգման շնորհիվ:

Բացի ճանաչումը, ժառանգման սկզբունքը կարող է լուծել նաև ավելի բարձր կանգնած շրջանակում փոփոխությունների դեպքում դրա շղթայական ազդեցությունը մյուս շրջանակների վրա՝ ընդհուպ մինչև կրթական ծրագիր:

Ժառանգման սկզբունքը առաջարկված մեթոդաբանության մեջ ապահովվում է շրջանակի մեթակառուցվածքի միջոցով: Մեր դեպքում այդ մեթակառուցվածը հանգում է ինքնուրույնության և կոնտեքստի բարդության նկարագրիչներին: Այս նկարագրիչները մանրամասն սահմանված են մեթոդաբանության մեջ:

Օրինակ՝ ԵՈՇ-ում բակալավրը կարող է գործունեություն ծավալել

միայն մասնագիտական ուղղորդման պայմաններում և խնդիրներ ստանալ առաջադրանքների տեսքով: Այս սկզբունքը ներառելով ՈՈԱՇ-ում մենք ապահովում ենք, որ ԵՈՇ-ում դրա հետ կապված յուրաքանչյուր փոփոխություն կարտացոլվի նաև ՈՈԱՇ-ում:

Այսպիսով, պատասխանելով վերում նշված հարցերին, պետք է համոզվել, որ ձեր ոլորտի յուրահատկությունները թույլ են տալիս ապահովել նշված սկզբունքները: Այն ինչ դուրս է մնում այս սկզբունքների սահմաններից ոլորտի յուրահատկությունն է: Ուստի կարող է և պետք է փոփոխվի:

### **ՈՈԱՇ-ի ընդհանուր կառուցվածքը. ամբողջականության սկզբունք**

ՈՈԱՇ-ի կառուցվածքը մշակելիս փորձագիտական խումբը համաձայնության է եկել կառուցվածքի հետևյալ հիմնական բաղադրիչների շուրջ:

- Ապրանքի կամ ծառայության կենսափուլ
  - Կոմպետենցիաներ
  - Հմտություններ
- Մասնագիտական մտածողություն
- Գիտելիքի մարմին (BOK)
- Ապրանքի նկարագրություն

Առաջարկվող շրջանակը իրենից ներկայացնում է 2 մակարդակի շրջանակների համադրություն:


Ոլորտային շրջանակը (SQF) բաղկացած է երկու մասից: Առաջինը ունակությունների նկարագրությունն է, իսկ երկրորդը՝ ապրանքի կենսափուլի համար անհրաժեշտ կոմպետենցիաների նկարագրությունը: Անդրադառնանք դրանց առանձին– առանձին:

Ապրանքի կենսափուլի բաղադրիչները ունեն բնային դիզայն և

ձևավորվում են ամբողջականության և օպերացիոնալիզացիայի սկզբունքով: Սա նշանակում է, որ ոլորտին վերաբերող կոմպետենցիաների ամբողջությունը դասակարգված է ըստ ապրանքի ստեղծման կենսափուլի: Այդ փուլերը թույլ են տալիս ապահովել, որ ոլորտին բնորոշ բոլոր անհրաժեշտ կոմպետենցիաները ներկայացված կլինեն շրջանակի նկարագրության մեջ: Սա ամբողջականության սկզբունքն է, որի պահպանումը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ ապրանքի ստեղծման կենսափուլը արտացոլում է աշխատաշուկայի իրական գործընթացները, հետևաբար ավելի է մոտեցնում շրջանակը գործնական կյանքին:

Բացի դա յուրաքանչյուր առանձին փուլի համար նկարագրված են այն բոլոր կոմպետենցիաները, որոնք անհրաժեշտ են այդ փուլի իրագործման համար: Յուրաքանչյուր կոմպետենցիայի համար ներկայացված է դրան համապատասխան հմտությունների շարքը, որը թույլ է տալիս ձևավորել կոմպետենցիան: Այս կառուցվածքի միջոցով պահպանվում է օպերացիոնալիզացիայի սկզբունքը և ավելի վերացական կառույցները ներկայացվում են հասկանալի և համեմատաբար ավելի չափելի միավորների տեսքով:

Ոլորտի մասին ամբողջական պատկերացում ունենալու համար հարկ է սահմանել այդ ոլորտին հատուկ ապրանքները: Ապրանքը, դա այն հիմնական արդյունքն է, որը ստացվում է գործընթացների արդյունքում:



Ոլորտին բնորոշ կոմպետենցիաների դասակարգման համար կիրառվող փուլերը պայմանականորեն կարելի է ներկայացնել հետևյալ անվանումներով:

- Մտահղացում
- Նախագծում
- Իրականացում
- Սպասարկում

ՌՈԱՇ-ի մշակման համար նախևառաջ անհրաժեշտ է սահմանել ոլորտի կոմպետենցիաների դասակարգման սկզբունքները: Սույն մոդելում դասակարգումը իրականանում է ըստ ապրանքի կամ ծառայության շրջափուլի: Այդ շրջափուլը ենթադրում է հետևյալ հիմնական փուլերը:

**Մրահողացման** փուլը ապրանքի կամ ծառայության գաղափարի առաջացման գործընթացն է: Վերջինը պետք է հիմնված լինի սպառողի կարիքների և պահանջների վերլուծության վրա: Հետևա-



բար այն պետք է ներառի նաև կարիքների գնահատման գործընթաց:

Բացի սպառողների կարիքների վերահանումը և գնահատումը այս փուլում տեղի է ունենում նաև ապրանքի կամ ծառայության հիմնական ֆունկցիոնալ ասպեկտների և դիզայնի սահմանում:

Ըստ էության այս փուլի պայմանական ավարտին մասնագետը պետք է կարողանա նկարագրել և հիմնավորել ապրանքի կամ ծառայության *անհրաժեշտությունը* և *հիմնական ֆունկցիաները*:

**Նախագծման** փուլում տեղի է ունենում ապրանքի կամ ծառայության ամբողջական մշակումը սկսած նախնական փորձարկումից և կիրառման ընթացքում խնդիրների վերահանումից մինչև լիարժեք կիրառման համար *անհրաժեշտ* ապրանքի կամ ծառայության ձևավորումը:

Այս փուլի պայմանական ավարտին ապրանքը կամ ծառայությունը պետք է պատրաստ լինի շուկա մտնելու, իսկ մասնագետը պետք է կարողանա ցուցադրել դրա կիրառման և ֆունկցիոնալ հնարավորությունները իրական իրավիճակներում: Վերջինը չպետք է մեծ չափով տարբերվի լիարժեք ձևավորված ապրանքից կամ ծառայությունից:

Ապրանքի կամ ծառայության ընդհանուր նախագծի մշակումից հետո *անհրաժեշտ* է սահմանել դրա արտադրման կամ **իրականացման** ձևը: Այս գործընթացը կարող է ներառել իրականացման քայլերի հաջորդականության և հրահանգների նկարագրություն: Մարքեթինգային փաստաթղթերը, վաճառքի ռազմավարությունը նույնպես ներառվում են այս փուլում:

Ապրանքի կամ ծառայության շրջափուլի վերջին փուլը ենթադրում է ընթացիկ **սպասարկում**: Արտադրողը կամ ծառայություն մատուցողը պետք է ապահովի սպառողին կիրառման և վերականգնման մասին *անհրաժեշտ* ինֆորմացիայով:

Ըստ ներկայացված փուլերի ՈՈԱՇ-ը մշակելիս հարկ է

ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ ներկայացված փուլերը կարող են յուրովի մեկնաբանվել՝ կախված ոլորտի առանձնահատկություններից: Կարող են փոփոխվել նաև շրջափուլերի անվանումները և դրանց սահմանումները:

Այսպիսով, ներկայացված շրջափուլերը անհրաժեշտ է դիտարկել, որպես ուղղորդող գործիք, որը թույլ է տալիս դասակարգել ոլորտին հատուկ կոմպետենցիաները՝ ապահովելով նկարագրության ամբողջականությունը և կապը աշխատաշուկային բնորոշ գործընթացների հետ:

Կառուցվածքով նախատեսված հաջորդ բաղադրիչը, ինչպես արդեն նշվեց վերևում, հմտություններն են: Գրականության մեջ առկա են կոմպետենցիաների տարբեր սահմանումներ: Մասնագիտական շրջանակներում բանավեճերը կապված կոմպետենցիաների սահմանման հետ շարունակվում են: Տվյալ մեթոդաբանության շրջանակներում մենք կօգտվենք Եվրոպական որակավորումների շրջանակում (ԵՈՇ) ընդունված սահմանումից: Նման ընտրությունը կնպաստի շրջանակների միջև համապատասխանության ապահովմանը: ԵՈՇ-ում կոմպետենցիայի սահմանումը հնչում է հետևյալ կերպ՝

**Կոմպետենցիան** տեսանելի արդյունքի ձեռքբերման նպատակով գիտելիքների և հմտությունների կիրառումն է:

Սահմանումից հետևում է, որ կոմպետենցիան դա այն համալիր վարքն է, որը իր մեջ ներառում է կոգնիտիվ (գիտելիքի տեսքով) և վարքային (հմտության տեսքով) բաղադրիչներ: Արդյունքում կոմպետենցիան հանդես է գալիս որպես գիտելիքը ու հմտությունը միացնող միավոր:

Կոմպետենցիաների ներսում՝ համաձայն վերևում ներկայացված կառուցվածքի ներդրված են հմտությունները: Հմտության սահմանումը նույնպես նույնական է ԵՈՇ սահմանման հետ: Այն հնչում է հետևյալ կերպ՝ **Հմտությունը** գիտելիքի կիրառման միջոցով

առաջադրանքների իրականացման կարողությունն է: Այն կարող է ունենա երկու դրսևորում՝ վարքային և կոգնիտիվ: Կոգնիտիվը ներառում է տրամաբանական, ինտուիտիվ կամ ստեղծարար մտածողություն, իսկ վարքայինը ներառում է կոնկրետ տեսանելի գործողություններ:

Այսպիսով, կենսափոլի առանձին փուլը բաղկացած է 3 մասից: Փուլ, կոմպետենցիա և հմտություններ: Ըստ էության այն ունի բնային կառուցվածք, որի արտաքին շերտը ապրանքի կենսափուլերն են, այնուհետև դրանց ներսում ներդրված են կոմպետենցիաները և կոմպետենցիաների ներսում հմտությունները:

Դրանց զուգահեռ ներկայացվում է նաև մասնագիտական մտածողությունը, որը սահմանվում են որպես ոլորտի մասնագետներին բնորոշ մտածելու կամ խնդիրներ լուծելու ձևերի առանձնահատկություններ, որոնք ձեռք են բերվում ոլորտը ուսումնասիրելու և/կամ այդ ոլորտում աշխատելու միջոցով: Ոլորտի մասնագետը պետք է դրանց տիրապետի նվազագույն մակարդակում: Այդ առանձնահատկությունները ապահովում են մասնագիտական ոլորտում հետագա հաջողությունները:

Շրջանակի այս մասը հիմնված է մասնագիտական ոլորտի առանձնահատկությունների վրա և մեծապես ներառում է ոլորտի մասնագետի ընդհանրական նկարագրությունը, պահանջում է գիտելիքներ և կարողություններ որոնց ձեռքբերման միջավայրը համալսարանական դասընթացներն են:

Բնականաբար ուսուցման պրոցեսի համակարգման համար համալսարանական ուսուցման պատասխանատուները կարտապատկերեն նշված նկարագիրը դեպի դասընթացներ կամ մոդուլներ և հաճնարարությունների ու ընթացիկ գնահատումների միջոցով կուղղորդեն դեպի մտապահված վերջնարդյունքը: Ամեն համալսարան ունենալով մեր շրջանակում նշվածը յուրովի կուղղորդի իր ուսանողներին ուսուցման ընթացքում: Մեկ բան է կարևոր, որ

դասընթացների ցանկը ոլորտի զարգացման ժամանակային ամեն փուլում ունի կրթական պրակտիկային բնորոշ ներքին համակարգվածություն: Համակարգված ուսուցումը հետապնդում է վերջնարդյունքների կառուցվածք: Վերջնարդյունքների գիտելիքային մասի ծավալը պետք է պարտադիր տրվի տեխնոլոգիաների զարգացման տվյալ փուլի համար: Այդ իմաստով դժվար է ամեն համալսարանների համար վերևից սահմանել կրթական ծրագրի վերջնարդյունքների ցանկ (դա ամեն կրթական ծրագրի իր պատասխանատվությունն է), բայց կարելի է հավակնել ուղղորդել դեպի կրթական խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է որոշակի բովանդակային կողմնորոշումը:

Այսպիսով շրջանակը ավելի հասկանալի և կիրառելի դարձնելու նպատակով այն համալրվել է բովանդակության վրա կողմնորոշված շրջանակով: Դրանք գիտելիքի մարմիններն են (BOK – Body of Knowledge): BOK-ը իրենից ներկայացնում է երաշխավորվող բովանդակության զանգված, որը կարող է կիրառվել կրթական հաստատությունների կողմից ոլորտում կրթություն տալու նպատակով: Այս համալրումը թույլ կտա կրթության մասնագետներին հստակ կողմնորոշվել բովանդակության մեջ: Բովանդակության մեջ կողմնորոշվելուց հետո յուրաքանչյուր ծրագրի շրջանակներում այն կարող է ուղղվել ոլորտին համապատասխան վարքի ձևավորմամբ, որը նկարագրված է մասնագիտական մտածողության և ապրանքի շրջափուլի մասում:

Մեր երկրի պարագայում, որպես BOK կարող են ծառայել ներկայումս Հայաստանում գործող պետական չափորոշիչները: Դրանք ներառում են ոլորտին հատուկ հստակ բովանդակություն:

## **Ուսումնառության մակարդակի նկարագրիչներ. Ժառանգման սկզբունք**

ՈՈԱՇ-ը ՈԱՇ/ԵՈՇ համապատասխանեցնելու և ժառանգման սկզբունքը պահպանելու նպատակով կիրառվել են ուսումնառության մակարդակի նկարագրիչները, որոնք նույնական են ԵՈՇ-ում կիրառված նկարագրիչներին: Ուսումնառության մակարդակի նկարագրիչները հանդես են գալիս, որպես մեթաշրջանակ և թույլ են տալիս հստակ և ամբողջական պատկերացում կազմել ուսումնառության մակարդակի բաղադրիչների մասին:

Այդ նկարագրիչները ներդրված են, ոչ միայն ԵՈՇ-ի այլ նաև մի շարք այլ ոլորտային շրջանակների մեջ ինչպիսիք են e-Competence, SSOAR construction industry in Europe:


Համաձայն այդ մոտեցման ուսումնառության մակարդակը նկարագրվում է հետևյալ բաղադրիչներով՝

*Վարք – Կիրառելուց մինչև մտահղանալու կարողություն*

*Ինքնուրույնություն – հրահանգներով աշխատելու կարողությունից մինչև անձնական ընտրություն կատարելու կարողություն*

*Համատեքստի բարդություն – նախասահմանված և կանխատեսված իրավիճակից մինչև չսահմանված և չկանխատեսված իրավիճակ*

Ուսումնառության մակարդակի նկարագրիչները հանդես են գալիս, որպես եռաչափ համակարգ: Դրանում ինքնուրույնությունը և համատեքստի բարդությունը ժառանգվում են ԵՈՇ-ից: Դա թույլ է տալիս ապահովել ՈՈԱՇ-ի համապատասխանությունը ԵՈՇ-ին: Բացի դրա նկարագրիչները ներկայացված են հասկանալի լեզվով՝ կոնկրետ գործողությունների տեսքով: Այս առանձնահատկությունը թույլ է տալիս ավելի բարձր մակարդակի շրջանակում փոփոխությունների դեպքում՝ նույն փոփոխությունները կատարել ներքևում գտնվող շրջանակներում (նկ. 1):



Նկարագրիչների երրորդ բաղադրիչը վարքն է: Կիրառելի մինչև մտահղանալու այս կարողությունը փոփոխվում է կախված ազգային, առարկայական, ոլորտային առանձնահատկություններից: Դրանից ելնելով ներկայացվող մեթոդաբանության մեջ ժառանգվում են միայն ինքնուրույնության և համատեքստի բարդության նկարագրիչները: Վարքը, որպես դրանց բաղադրիչ նկարագրվում է ելնելով ոլորտի առանձնահատկություններից:

Ստորև ներկայացված աղյուսակում բերված են ուսումնառության մակարդակի նկարագրիչներ ը ըստ ԵՈՇ-ի:

ԵՈՇ	Ինքնուրույնություն	Համատեքստի բարդություն
8	<p><b>Կատարում է ընտրություն:</b> Ունի լիազորություն և աշխատանքի բոլոր էական ասպեկտների նկատմամբ՝ ներառյալ քաղաքականության մշակում և կիրառում: Ամբողջությամբ պատասխանատու է ինչպես իր, այնպես էլ ենթակաների որոշումների և քայլերի համար:</p>	<p><i>չսահմանված - չկանխաստիճանային</i></p>

7	<p><b>Ունի որոշակի լիազորություններ և պատասխանատվություն աշխատանքի էական մասի նկատմամբ՝</b> ներառյալ տեխնիկական, ֆինանսական և որակի ասպեկտները: Սահմանում է կազմակերպության խնդիրները և առաջադրանքները: Պատասխանատու է ինչպես իր, այնպես էլ ենթակաների որոշումների և քայլերի համար:</p>	
6	<p><b>Աշխատում է հրահանգներով,</b> կատարում է ընտրություն՝ աշխատելով ուղղորդման պայմաններում: Ամբողջությամբ պատասխանատու է տեխնիկական կամ նախագծային աշխատանքների համար: Խնդիրները ստանում է առաջադրանքների տեսքով: Աշխատանքը որպես կանոն կատարում է սեփական նախաձեռնությամբ:</p>	<p><i>սահմանված - չկանխարեսված</i></p>

Շրջանակի նկարագրության մեջ ուսումնառության բաղադրիչները միասնական տեքստով են նկարագրված: Դա արվել է ելնելով շրջանակի ուղղորդող գործառույթից: Նման նկարագրությունը թույլ է տալիս շրջանակը կիրառողին իր աչքի առաջ ունենալ այն մասնագետի ընդհանրական նկարագիրը և համապատասխանաբար համեմատել սեփական գործողությունները այդ նկարագրի հետ: Սա անհրաժեշտ է ինչպես կրթության ոլորտին, այնպես էլ աշխատաշուկային:

## Մշակման սկզբունքներ և փուլեր

ՈՌԱՇ-ի մշակման գործընթացում կարևոր և հիմնարար սկզբունքը կայանում է ներկայացուցչականության ապահովման մեջ: Դա նշանակում է, որ մշակված շրջանակը պետք է ճանաչելի, ընդունելի և հասկանալի լինի բոլոր շահակիցների կողմից: Այս սկզբունքը բխում է ՈՌԱՇ-ի ընդհանրական բնույթից: Այն, ինչպես արդեն նշվել է, պետք է կիրառվի շահակիցների լայն շրջանակի կողմից մի շարք խնդիրների լուծմանը աջակցելու համար:

ՈՌԱՇ-ը ենթադրում է հետևյալ հիմնական շահակիցների ներգրավվածություն՝

- Ուսանողներ
- Շրջանավարտներ
- Ոլորտի մասնագետներ
- Բուհ
- Գործատուներ

Նշված շահակիցներից յուրաքանչյուրի մասնակցությունը պետք է ապահովի շրջանակի համընդհանուր բնույթը: Մասնակցության ձևաչափը կախված է շրջանակը մշակող խմբի հնարավորություններից և մոտեցումներից: Սակայն նրանց ներդրումը պետք է լինի հստակ և առարկայական: Անհրաժեշտ է հնարավորինս խուսափել նոմինալ մասնակցությունից:

Մասնակցության ձևաչափը կարող է լինել հարցումների, ֆոկուս խմբերի, փորձագիտական հանդիպումների և աշխատանքային խմբերում ներգրավվածության տեսքով: Արդյունքում բոլոր շահագրգիռ կողմերը պետք է հավաստեն, որ շրջանակը արտացոլում է ոլորտը՝ իր ամբողջականության մեջ և հասկանալի է բոլոր համար:

ՈՌԱՇ-ի մշակման փուլերը կարելի է սահմանել հետևյալ կերպ՝

- Շահակիցների նախնական հանդիպում



- Շրջանակի կառուցվածքի համաձայնեցում
- Աշխատանքային խմբերի ձևավորում
- Ինֆորմացիայի վերլուծություն և նախնական բովանդակություն
- Սևագիր տարբերակի քննարկում և վերանայում
- Վերջնական տարբերակի մշակում

Շահակիցների նախնական հանդիպումը անհրաժեշտ է, որպեսզի հստակեցվեն և համաձայնեցվեն ՈՈԱԾ-ի մշակման նպատակները և քննարկվեն լուծման կարիք ունեցող խնդիրները: Այս փուլը կարևոր է նպատակաուղղվածության ձևավորման իմաստով: Հաջորդ, շրջանակի կառուցվածքի համաձայնեցման փուլը անհրաժեշտ է, որպեսզի բոլոր մասնակիցները ունենան միասնական պատկերացում ոլորտի կոմպետենցիաների կառուցվածքի և ներքին կապերի մասին: Սա թույլ կտա ձևավորել հստակ պատկերացում այն հիմնական բաղադրիչների մասին, որոնք նկարագրում են մասնագետին: Հաջորդ քայլը աշխատանքային խմբերի ձևավորումն է: Սրանք այն խմբերն են, որոնք պետք է կատարեն հիմնական բովանդակային աշխատանքը: Ուստի հարկ է ուշադրություն դարձնել դրանց կազմի վրա՝ ապահովել ներկայացուցչականությունը անհրաժեշտ մասնագետներով: Ցանկալի է այդ խմբերում ներգրավել ոչ միայն ոլորտի փորձագետի, այլ նաև կրթության ոլորտի մասնագետի: Դա թույլ կտա ապահովել մշակվող բովանդակության համապատասխանությունը նախապես համաձայնեցված շրջանակին:

Հաջորդ քայլը բուն բովանդակային աշխատանքն է: Սա ինֆորմացիայի վերլուծության փուլն է, որի համար անհրաժեշտ է իրականացնել ոլորտի կոմպետենցիաների ուսումնասիրություն: Այդ նպատակով, որպես ինֆորմացիայի աղբյուր կարող են կիրառվել տարբեր կազմակերպությունների, մասնագիտական միավորումների և հետազոտողների աշխատանքները: Արարատ

ծրագրի շրջանակներում ձևավորված էլեկտրոնային հարցումների համակարգը տրամադրում է որոշակի ինֆորմացիա, որը համապատասխանում է շրջանակի մշակման պահանջներին: Այն նույնպես կարող է կիրառվել, որպես ինֆորմացիայի աղբյուր: Կոմպետենցիաների ուսումնասիրությունը պետք է ուղեկցվի աշխատաշուկայի հետազոտություններով կամ առկա հետազոտությունների վերլուծությամբ: Դրանք թույլ կտան ավելի հստակ պատկերացում կազմել այն միջավայրի մասին, որտեղ պետք է հետազայում կիրառվի շրջանակը:

Ոլորտին վերաբերող ինֆորմացիայի վերլուծությունից հետո անհրաժեշտ է մշակել կոմպետենցիաների նախնական նկարագրությունը՝ բովանդակությունը: Այն պետք է ստանա սևագիր տարբերակի տեսք և քննարկվի բոլոր շահակիցների կողմից: Թերևս այստեղ պետք է փորձել պատասխանել դրա համապատասխանության և կիրառելիության հարցերին՝ արդեն հստակ օրինակի վրա: Սևագիր տարբերակը քննարկելուց հետո այն վերանայվում է և ստանում վերջնական տեսք:

Նկարագրված փուլերը ունեն խորհրդատվական/երաշխավորական բնույթ: Դա նշանակում է, որ փուլերը կարող են մոդիֆիկացվել և վերանայվել կախված ոլորտին բնորոշ առանձնահատկություններից և մշակող խմբի հնարավորություններից:

Այս թվարկումը արտացոլում է այն հիմնական գործընթացները, որոնք անհրաժեշտ են առաջին մասում նկարագրված սկզբունքների պահպանման համար:

## **Հետագա մշակումներ**

Որպեսզի ՈՈԱԾ-ը նպաստի իրառջև դրված նպատակների իրականացմանը անհրաժեշտ է, որպեսզի այն համալրվի մի շարք աջակցող փաստաթղթերով: Աջակցող փաստաթղթերը

թույլ են տալիս սահմանել կիրառման նպատակին համահունչ քաղաքականությունը: Դրանք ունեն խորհրդատվական բնույթ և հանդես են գալիս, որպես ՈՈԱՇ-ի կիրառումը դյուրացնող գործիքներ:

Համաձայն սահմանված նպատակների առաջարկում ենք հետ ազայում մշակել հետևյալ փաստաթղթերը՝

1. Ոլորտի կոմպետենցիաների զարգացման և ձևավորման քաղաքականություն,
2. Ոլորտի որակի ապահովման գործընթացներում շրջանակի կիրառման քաղաքականություն,
3. ՈՈԱՇ-ը կրթական ծրագրերի մեջ ներառելու մեխանիզմների մշակում,
4. Ժառանգման մեխանիզմի իրականացման գործիք:

Առաջին փաստաթուղթը ենթադրում է ոլորտի այն կոմպետենցիաների բացահայտում, որոնց կարիքը հատկապես կա աշխատաշուկայում և որոնք կարող են նպաստել ոլորտի զարգացմանը: Հետազոտությունը կարող է նախադեպ դառնալ հանրապետական մակարդակում գիտելիքի/կոմպետենցիաների կառավարման մոդելի ստեղծման համար: Նման մոտեցումը թույլ կտա ավելի հստակ և ստուգված տեղեկատվությունից ելնելով կողմնորոշել ոլորտի կոմպետենցիաների զարգացումը: Այս մոտեցումը կնպաստի ինչպես շուկայի զարգացմանը, այնպես էլ կրթական ծառայություն ների որակի բարձրացմանը:

Կրթական հաստատությունները ավելի հստակ պատկերացում ունենալով աշխատաշուկայի կարիքների մասին կարող են կողմնորոշել կրթությունը այդ ուղղությամբ: Արդյունքում կձևավորվի երկուստեք նպաստավոր համարգ:

